ՀՀ Արմավիրի մարզպետ

Պրն Է. Հովհաննիսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Տեղեկացվում է Ձեզ, որ « Երասխահունի Մ. Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց » պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարվել է մրցույթ:

Մրցույթը կկայանա 2022 թվականի փետրվարի 14 –ին՝ ժամը 15. 00 -ին:

Կից ներկայացվում են՝ քաղվածք կառավարման խորհրդի համապատասխան նիստի N 3 արձանագրությունից և հայտարարության տեքստը:

Առդիր՝ 1 թերթ և 1 էլեկտրոնային նյութ:

Խորհրդի նախագահ՝ / Դ. Մինասյան /

07. 01. 2022 թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 1Ա-00585-20
10 01 2022 թ.

# ՔԱՂՎԱԾՔ

**« ԵՐԱՍԽԱՀՈՒՆԻ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ » ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 7 –ԻՆ ԿԱՅԱՑԱԾ N 3 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ**

Նիստը գումարվել է 2022 թ –ի հունվարի 7–ին:

Նիստին մասնակցում են խորհրդի 9 / ինը / անդամներ:

## ՕՐԱԿԱՐԳ

1. «Երասխահունի Մ. Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ –ի գործադիր տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հայտարարության մասին / զեկուցող՝ Դավիթ Մինասյան /:

**ԼՍԵՑԻՆ.**

Դավիթ Մինասյանը ներկայացրեց, որ « Երասխահունի Մ. Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ –ում անցկացվելու է դպրոցի գործադիր տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2021 թվականի փետրվարի 11 –ի N 161-Ն որոշման երկրորդ կետի երկրորդ ենթակետը՝ այն է՝ Հաստատության կոլեգյալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, 3 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հայտարարելու մասին որոշում: Խորհուրդը, տնօրենի թափուր պաշտոն առաջանալու օրվանից հաշված, առավելագույնը եռամսյա ժամկետում (չներառելով դպրոցական արձակուրդների, արտակարգ և ռազմական դրության ժամանակահատվածը) կազմակերպում և անցկացնում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:

Հիմք ընդունելով վերոնշյալը, ինչպես նաև դպրոցական արձակուրդի ժամկետները՝

## ՈՐՈՇԵՑԻՆ

« Երասխահունի Մ. Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ -ի տնօրենի պաշտոնի համար անցկացնել մրցույթ:

Փաստաթղթերի ընդունման ժամկետ սահմանել 2022 թ –ի հունվարի 10 -ից մինչև հունվար 31-ը ներառյալ, ամեն օր ժամը 10.00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը նշանակել 2022 թ –ի փետրվարի 14- ին՝ ժամը 15:00:

Կառավարման խորհրդի նախագահ՝ / Դավիթ Մինասյան /

քարտուղար՝ / Ռուզան Սարգսյան /

**ՀՀ Արմավիրի մարզի « Երասխահունի Մ. Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:**

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացվել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը) (այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5. ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թ. հունվարի 10 -ից մինչև հունվարի 31-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակիօրերից, **« Երասխահունի Մ. Գևորգյանի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ** -ում:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. փետրվարի 14 -ին՝ ժամը 15:00-ին,** ՀՀ Արմավիրի մարզի **« Երասխահունի Մ. Գևորգյանի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ** -ում, հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Երասխահուն, փողոց 1 շենք 21:

Տեղեկությունների համար դիմել հեռախոս՝ 093-877-400, էլ.փոստ՝ yerashahun@schools.am